



Co-funded by the
Erasmus+ Programme
of the European Union



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ

MINERVA  2019-2022

Strengthening Research Management and
Open Science Capacities of HEIs in Moldova and Armenia

Հետազոտությունների կառավարման և «Բաց գիտության»
կարողությունների զարգացումը Մոլդովայի և Հայաստանի բուհերում
«Միներվա»
Strengthening Research Management and Open Science capacities of HEIs in
Moldova and Armenia / MINERVA

Project Reference: 597912-EPP-1-2018-1-MD-EPPKA2-CBHE-SP

Ծրագրի բյուջե. 979.989,00 եվրո

ՀՊՏՀ բյուջե. 82,452,00 եվրո



«Միներվա» ծրագիրը միտված է ստեղծելու բարենպաստ պայմաններ Մոլդովայի և Հայաստանի համալսարաններում Բաց գիտության հիմնական սկզբունքների ներդրման համար, քանզի Բաց գիտությունը, հետազոտությունների հրապարակայնությունը, համագործակցությունը և նորարարությունները Եվրոպական հետազոտական տարածքի հիմնասյուններն են: Գիտության հանրահասանելիությունը արդյունավետ հիմք է հետազոտությունների թափանցիկության, տարածման, արդյունավետ համագործակցության և հաշվետվողականության ապահովման համար:

Մոլդովայի և Հայաստանի ակադեմիական հանրային արդեն իսկ ընդունել է Բաց գիտության սկզբունքների կարևորությունը և առավելությունը, որոնք դրսևորվում են պետական մարմինների, կրթական համակարգերի, գրադարանների, հասարակական կազմակերպությունների, գիտական ամսագրերի հրատարակիչների կողմից իրականացվող բազմաթիվ նախաձեռնությունների միջոցով: Այնուամենայնիվ, նշյալ կառույցների նորարարական ու հետազոտական աշխատանքների ոչ համակարգված բնույթը, չափանիշների ոչ լիարժեք փոխըմբռնումը այս նախաձեռնությունները դարձնում են մեկուսացված համաշխարհային ինտեգրման տեսանկյունից:

Ծրագրի նպատակներն են.

1. Մշակել Բաց գիտությանն առնչվող ազգային և ինստիտուցիոնալ ուղեցույցներ, ռազմավարություն և ընթացակարգեր, խրախուսման մեխանիզմներ Հայաստանի և Մոլդովայի համալսարանների համար:
2. Հիմնել թվանշանային պահոցներ /ռեպոզիտորիա/ և ենթակառուցվածքներ, խթանել դրանց զարգացումն ու փոխգործակցությունը գործընկեր համալսարանների միջև:
3. Ստեղծել հետազոտողների մարդկային ռեսուրսի կառավարման մեխանիզմներ, աջակցել գիտնականների հետազոտական կարողությունների զարգացմանը՝ բաց գիտության կայուն սկզբունքների իրականացման համատեքստում, ընդլայնել

հանրային ներգրավվածությունը և հաշվետվողականությունը՝ հատկապես պետական ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտությունների համար:

«Միներվա» ծրագրի իրականացման արդյունքում հետազոտական ոլորտում նախատեսվում է ունենալ.

1. բարելավված մարդկային ռեսուրսների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման քաղաքականություն,
2. հետազոտական ոլորտում զարգացած տեխնիկական և բովանդակային ենթակառուցվածքներ,
3. գրագողության և ակադեմիական էթիկայի խախտումների դեմ պայքարի ներդրված ծրագիր,
4. հետազոտությունների ներդրված բազա:

Աշխատանքային փաթեթներ

- **ԱՓ1՝** Հետազոտական և Բաց գիտության ներուժի և փորձառության քարտեզագրում
- **ԱՓ2՝** Բաց գիտության մասին օրենսդրական դաշտի համակարգում
- **ԱՓ3՝** Բաց գիտության ենթակառուցվածքների մշակում և զարգացում
- **ԱՓ4՝** Հետազոտությունների կառավարման կարողությունների զարգացում
- **ԱՓ5՝** Որակի ապահովում և մշտադիտարկում
- **ԱՓ6՝** Իրազեկում, կիրառում և ազդեցության գործակցի ավելացում
- **ԱՓ7՝** Ծրագրի կառավարում

Ծրագրի մասնակիցներ

1. Մոլդովայի տնտեսագիտական ակադեմիա (*համակարգող*)
2. Մոլդովայի բժշկության և դեղագործության համալսարան
3. Մոլդովայի պետական տեխնիկական համալսարան
4. Մոլդովայի ռեկտորների խորհուրդ
5. Մոլդովայի կրթության, մշակույթի և հետազոտության նախարարություն
6. Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան

7. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
8. Երևանի պետական համալսարան
9. Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվահասարակագիտական համալսարան
10. ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
11. Լիեժի համալսարան, Բելգիա
12. Մարկոնիի համալսարան, Իտալիա
13. Վալենսիայի համալսարան, Իսպանիա
14. Կոտ դ' Ազուր համալսարան, Ֆրանսիա
15. Մոնպելյեի համալսարան, Ֆրանսիա
16. Եվրոպական քաղաքականության մշակման և հետազոտության ինստիտուտ, Սլովենիա

Միներվա ծրագրի ՀՊՏՀ համակարգող

Որակի ապահովման բաժնի պետ՝ Ներսես Գևորգյան

Հեռ.՝ +374 10-59-34-13

E-mail: nerses.gevorgyan@fulbrightmail.org

Ծրագրի պաշտոնական կայք՝ <http://minerva-project.space/index.php/en>

Ծրագրի ֆեյսբուքյան էջ՝ <https://www.facebook.com/MINERVAMOLDOVA/>,

<https://www.facebook.com/minervaarmenia/>